6891

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«25» 04 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0044-22

Ձեռնարկողը՝ «ՌԻՉ-ԼԱՅՖ» ՍՊԸ
Երևան, Ադոնցի փ. 8շ. բն. 11

Գործունեությունը՝ **Կոտայքի մարզի Արզականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 1/74 հորատանցքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
Կոտայքի մարզ,

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0044-22

<25> 04 2022թ.

Կոտայքի մարզի Արզականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 1/74 հորատանցքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՌԻՉ-ԼԱՅՖ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, բն. Արզական

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի դ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

«ՌԻՉ-ԼԱՅՖ» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է ՀՀ Կոտայքի մարզի Արզականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 1/74 հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարներից 96184.8մ^3/տարի կամ 3.05լ/վրկ քանակությամբ ստանալ ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման իրավունք՝ բուժական (ռեկրեացիոն) նպատակով լողավազաններում օգտագործելու համար:

Արզականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի տարածքում առկա են հանքային ջրի թվով 3 հորատանցքեր (1/74, 2/74 և 14/76), որոնցից ներկայումս շահագործման է տրամադրված 1/74 և 14/76 հորատանցքերը: Հորատանցքերը միմյանցից գտնվում են՝ 100-250,0մ հեռավորությունների վրա:

Հանքավայրի հանքային ջրերը ճնշումային են, հորատանցքերը շատրվանում են հիմնականում գազլիֆտի հաշվին: Պաշարները հաշվարկվել և ԽՍՀՄ ՊՏՀ-ի կողմից 1978թ. հուլիսի 10-ին N237 արձանագրությամբ, 3 հորատանցքերով արդյունաբերական B կարգով: Շահագործական պաշարները հաստատվել են հետևյալ քանակներով.

Հ/Հ	Հորատանցքի համարը	Ջրի ծախսը լ/վրկ մ^3/օր	Ջրի ջերմաստիճանը ^{0}C	Ածխաթթվային գազի պարունակությունը գ/լ մ^3/մ^3	
1	Հորատանցք N 1/74	3.08 / 266,1	44,8	1,94 / 1,5	1,28
2	Հորատանցք N 2/74	3.0 / 259,2	42,5	2,6 / 1,9	1,1
3	Հորատանցք N14/76	2.33 / 201,3	49,2	2,2 / 1,8	1,2

Արզականի ածխաթթվային հանքային ջրերը թերմալ են (42.5-49.2°C), ածխաթթվային (CO_2 – 95-97%): Ածխաթթու գազի պարունակությունը կազմում է 3.3-5.8գ/լ, որից՝ 2.2-4.0գ/լ ազատ վիճակում, իսկ 1.1-1.8գ/լ լուծված վիճակում: Հանքայնացումը 4.7-5,4գ/լ է: Ըստ քիմիական կազմի հանքային ջուրը հիդրոկարբոնատ-քլորիդային, նատրիումային է:

Նկարագրական մաս. Հանքավայրի թիվ 1/74 հորատանցքը, որը նախատեսված է Ընկերության կողմից հանքային ջրի արդյունահանման համար, գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի վարչական սահմանում՝ Երևան-Աղվերան ավտոճանապարհի ձախ կողմում: Հորատանցքի խորությունը 300գծ.մ է, գտնվում է 1498.7մ բացարձակ բարձրության վրա: Հորատանցքի տարածքի բեկման կետերի կոորդինատները՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով հետևյալն են՝ X=8466417, Y=4480145, H=1490.7:

Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Ընկերության կողմից արդյունահանվող 1/74 հորատանցքը Արզաքան-Մեղրաձորի պետական արգելավայրից գտնվում է նվազագույնը՝ 1,5կմ հեռավորության վրա, իսկ Արզականի անտառապետության տարածքից՝ 1,8կմ հեռավորության վրա: Տարածքում չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

«ՌԻԶ-ԼԱՅՖ» ՍՊ ընկերությունը ՀՀ Կոտայքի մարզի Արզականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 1/74 հորատանցքի արդյունահանման աշխատանքները և ռեկրեացիոն նպատակով հանքային ջրի օգտագործումը նախատեսում է իրականացնել 20 տարի ժամկետով: Գործունեության կազմակերպման համար ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքում նախատեսվում է կառուցել 3 հատ լողավազաններ /որոնք իրարից գտնվում են 10-40մ հեռավորության վրա/, որոնցից 2 հատը՝ 15մ^2 մակերեսով են, իսկ 1 հատը՝ 20մ^2 մակերեսով, համապատասխանաբար՝ 22,5խմ և 30խմ ծավալներով: Լողավազանները լինելու են բացօթյա: Հանքային ջուրը լողավազաններ է տեղափոխվելու 30,0մ երկարությամբ, 100մմ տրամագծի վերգետնյա խողովակաշարով: Լողավազաններից դուրս եկած ջուրը նախատեսվում է հավաքել պարզարանում, որտեղ նստելուց հետո ջուրը կուղղվի Դալար գետ: Հանգստացողների սպասարկման համար նախատեսված է 20քմ մակերեսով սպասասրահ, 30քմ մակերեսով հանդերձարան: Այս օժանդակ կառույցերի համար նախատեսված տարածքներում հողաբուսաշերտը բացակայում է, հողային աշխատանքների ընթացքում շինությունների տակ ընկած հանվող հողագրունտի մնացորդային զանգվածը՝ 160խմ ծավալով /որից՝ 75խմ լողավազաններ, 75խմ պարզարան, 10խմ այլ կառույցներ/ կօգտագործվի տարածքների բարեկարգման նպատակով: Լողավազանների տարածքների շուրջ լրացուցիչ նախատեսված է ստեղծել կանաչ գոտի /չնայած տարածքում առկա է այն/:

Ընկերության կողմից նշված գործունեության կազմակերպման համար առկա են՝ ավտոճանապարհը, ենթակառուցվածքները (գազատար, ջրատար, էլեկտրա-ենթակայան, էլեկտրահաղորդման գծեր):

Ընկերությունը գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ խմելու և տեխնիկական նպատակով ջրամատակարարումը կիրականացնի Չարենցավան համայնքի ջրամատակարարման ցանցից՝ կնքվելիք պայմանագրի համաձայն, ինչը ձեռք կբերվի արդյունահանման թույլտվության ստացումից հետո: Ներությունում թվով 10 աշխատողների համար խմելու ծախսը հաշվարկվել է 91.25խմ/տարի, իսկ տարածքների ջրման համար ջրի ծախսը՝ 7.2խմ/տարի: Ավազանների լվացումը և մաքրումն իրականացվում են խոզանակներով և ջրով: Ջրավազանների մաքրման համար պահանջվող ջրի ծախսը /որը նախատեսված է իրականացնել եռամսյակը մեկ/ հաշվարկվել է 604խմ: Քանի որ Արզական համայնքում բացակայում է կոյուղատար ցանցը, կենցաղային կեղտաջրերի համար ընկերությունը նախատեսում է բետոնյա անջրթափանց հոր /3խմ ծավալով, 1x1x3մ չափերով/, որը համապատասխան ծառայության միջոցով պարբերաբեր կդատարկվի: Սանիտարական նորմերին համապատասխան նախատեսված են աշխատողների և հանգստացողների

սանիտարական պայմանների համար անհրաժեշտ սարքավորումներ պահանջվող քանակով:

Ընկերության կողմից շահագործվող ջրհավաք թիվ 1/74 հորատանցքն իր գլխամասային սարքավորումներով ներառված է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում: Գոտին պարսպատված է ցանկապատով և ապահովված է պահպանությամբ: Հաշվի առնելով ջրհավաք հորատանցքերի տեղամասի պայմանները (հորատանցքերը գտնվում են Արզականի գյուղի բնակելի շենքերի մոտակայքում,) 1/74 հորատանցքերի համար առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու մակերեսը սահմանվել է 70մ^2:

Արզականի ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման և հանգստի կազմակերպման համար նախատեսվող շինարարական աշխատանքների կատարման ընթացքում լանդշաֆտի ամբողջականության, հողային ծածկույթի, կեսաբազմազանության, մթնոլորտային օդի վրա զգալի ազդեցություններ չեն կանխատեսվում, քանի որ աշխատանքները փոքրածավալ են: Գործունեության իրականացումը չի ուղեկցվում վնասակար արտանետումներով, արտադրական և ընդերքօգտագործման թափոնների, ինչպես նաև վտանգավոր արտադրական հոսքաջրերի առաջացմամբ: Ընկերության տնտեսական գործունեությունից կարող են առաջանալ պինդ կենցաղային թափոններ, որոնք ժամանակավոր կկուտակվեն տարածքում տեղադրվող աղբամանների մեջ, որտեղից պայմանագրային հիմունքներով կտեղափոխվեն Չարենցավանի քաղաքային աղբավայր:

Ջրհավաք հորատանցքի արդյունավետ շահագործման հիմնական պահանջները՝ շինարարական աշխատանքների ընթացքում և հորատանցքի շահագործման փուլի համար ներառում են՝

- ապահովել հորատանցքի լավ տեխնիկական վիճակ, ջրհավաք հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորվել համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ,
- ջրհավաք հորատանցքի շուրջ ապահովել ֆունդամենտի հիդրոիզոլյացիա, ինչը կբացառի մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք,
- հանքային ջրի արդյունահանումը ջրհավաք հորատանցքից իրականացնել չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով,
- ապահովել ջրհավաք հորատանցքը առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիով՝ հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար,
- հորատանցքի շահագործումն իրականացնել հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին համապատասխան,
- ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ իրականացնել սիստեմատիկ ստացիոնար հիդրոերկրաբանական ռեժիմային մշտադիտարկումների (մոնիթորինգ),
- լողավազանների և օժանդակ շինությունների կառուցման ընթացքում ապահովել հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառումները,

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և «Ռիչ-Լայֆ» ՍՊ ընկերության կողմից, հորատանցքի շահագործմանը զուգընթաց նախատեսվում է իրականացնել շահագործման ռեժիմի, ջրի որակական, քանակական բնութագրերի մոնիթորինգ և հորատանցքի տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ՝ ջուրը հնարավոր աղտոտումից, սպառումից և տեխնածին

վնասակար ազդեցությունից զերծ պահելու նպատակով: Մշտադիտարկումները (մոնիթորինգ) ներառում են՝ հորատանցքում ջրի և ազատ ածխաթթու գազի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, որոնք կատարվելու են 10 օրը մեկ անգամ հաճախականությամբ: Նախատեսված է նաև ջրի նմուշարկումներ և լաբորատոր հետազոտություններ (որոշելու համար՝ կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները), ինչպես նաև սանիտարական գոտու տարածքում հողի նմուշարկումներ: Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները և հաստատված պաշարների և մոնիտորինգի արդյունքում ստացված տվյալների միջև զգալի տարբերություն պարագայում ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան վերագնահատել պաշարները:

ՇՄԱԳ-ում ներկայացվել է վերոնշյալ աշխատանքների և գործողությունների իրականացման ներդրումների նախահաշիվը, որը գնահատվել է 9444000 ՀՀ դրամ, որից հիդրոերկրաբանական ռեժիմային դիտարկումների (մոնիտորինգի) կատարման /շուրջտարյա/ ծախսերը գնահատվել են 1 200 000 ՀՀ դրամ:

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ժամանակ արդյունահանմանը զուգընթաց ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան Ընկերության կողմից նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ՝ հորատանցքի և լողավազանի տարածքներում /որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը: Այս մշտադիտարկումների հաճախականությունն ընդունվել է տարեկան մեկ անգամ, իրականացման համար տարեկան ծախսերը գնահատվել է 150.0 հազ ՀՀ դրամ:

Գործունեության իրականացման արդյունքում նախատեսվող միջոցառումները և մշտադիտարկումները ամփոփվել են շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլաններում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները ևս հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Արզականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 1/74 հորատանցքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/: Հանրության կողմից գործունեության իրականացումն արժանացել է հավանության, քննարկվել է ընկերության կողմից համայնքի համար նախատեսվող սոցիալական ու ներդրումային ծրագրերի և ստեղծվելիք աշխատատեղերի հարցը: Ընկերությունը հայտնեց իր պատրաստակամությունը առաջարկների իրականացման համար:

Ելնելով վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ պայմանավորված աշխատանքների բնույթով և տեսակներով, շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հանքային ջրի արդյունահանման ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի

սահմաններում, գործունեությունը չի ուղեկցվում արտադրական և ընդերքօգտագործման թափոնների առաջացմամբ, մթնոլորտային արտանետումներով, ինչպես նաև վտանգավոր արտահոսքերով: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում Կոտայքի մարզի Արզական բնակավայրում կստեղծվի աշխատատեղեր՝ տեղի աշխատաուժի հաշվին, ինչը կարող է նպաստել բնակչության սոցիալական պայմանների բարելավմանը և կենսամակարդակի բարձրացմանը:

Փորձաքննական պահանջներ

1. «Ռիչ-Լայֆ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող Արզականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 1/74 հորատանցքի արդյունահանման և հանքային ջուրը ռեկրեացիոն նպատակով օգտագործելու համար անհրաժեշտ է առաջնորդվել՝

- Ընդերքի մասին օրենսգրքի 67-րդ հոդվածի և ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. նոյեմբերի 29-ի N803 հրամանի պահանջներով՝ սանիտարական պահպանման առաջին գոտու սահմաններում հորատանցքը աղտոտումից զերծ պահելու նպատակով:
- ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 1484-Ն որոշման պահանջներով՝ հանքային ջրի արդյունահանումը հաստատված պաշարների քանակին, որակին և ռեժիմին համապատասխան իրականացնելու նպատակով:
- Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 9-ի N 335-Ն հրամանի պահանջներով՝ ռեկրեացիոն գոտում ջրային ռեսուրսների պահպանության պահանջներն ապահովելու նպատակով:
- Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15 հրամանի պահանջներով՝ սանիտարական նորմերը և կանոններն ապահովելու նպատակով:
- ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով:

2.Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել և ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև ապահովել Արզական բնակավայրում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՌԻՉ-ԼԱՅՖ» ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արզականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 1/74 հորատանցքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Հ. Մկրտչյան